

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Պարզութեան ու անյբեկ նշաններ :

ԳԻՏԱԿԱՆԱՑ շատ հարկաւոր է ցանելու և վարելու համար գիտնալ պարզութեան և անձրեի նշանները . ուստի փոքր լ'սիոյ բնակիներէն մէկը՝ որ շատ բան դիտեր ու նշաներ է հողերուն տեսակներուն վրայ, իւրաքանչիւր սերմերուն որ հողը սիրելուն չսիրելուն, ու ցանելու և արդիւնաւոր ընելուն վրայ, և տունկերը տնկելու պատուաստելու, դարման տանելու վրայ, հետեւալ ծանօթութիւնները կուտայ օդուն վրայ :

Տարին չորս եղանակ ունի . ձմեռ, գարուն, ամառ, աշուն . ամէն մարդ՝ իր բնակութեան տեղը ի՞նչ փոփոխութիւններ որ կրնան ունենալ աս չորս եղանակները՝ պէտք է ուշադրութք սորվի :

Լ'ս եղանակներուն մէջ մարդս իրեւ շրջանով մը պտըտելով, իր կեանքը կ'անցունէ . բայց, թող աստեղաբաշխները և ուրիշ բնական բաներու ետևէ ընկնող գիտնականները, այլ և շատ ռամիկ գիւղականաց քովը տեսանք շատ բաներու ուշադրութիւններ, որոնք կէս մը աւանդութեամբ իրենց մեծերէն լսեր են, կէս մ'ալ իրենք խելք բանեցընելով գտեր են :

Ուստի մէկ պարզ գիւղական մը թէ ունենայ անանկ գրով կամ բանիւ իրեն մէկ առաջնորդող մը, ետևէն ինքնալ խելք բանեցընէ, շատ յաջողակութիւն կըստանայ . մէկ խօսքով, պարզ մշակութիւնը անգամ գիտնօրէն կ'ընէ . որով ոչ միայն իրեն շահաստացութեանը ձամբայ կը բանայ, այլ և բրտութիւնն ալ վրայէն կը սըկըրդէ կը նետէ :

(Պայն պարզութեան նշաններ :

Լուսինը իրեք օրուան եղած ատենը վրան բարակ ձերմակ ամպ մը որ կապէ՝ պարզութեան նշան է, օդը բաց ու պայծառ կ'ըլլայ :

Լոյնպէս չորրորդ օրը՝ լուսինը պարզ ու պայծառ տեսնուի նէ, պարզութեան նշան է, օդը պայծառ կ'ըլլայ :

Լրբոր լուսինը բակ ունենայ, և անբակը պարզ և ձերմակ տեսնես, պարզութեան նշան է :

Լրեն ալ ասանկ առաւտուն տեսնես նէ, պարզութեան նշան է :

Լրել մտած ժամանակը պարզ և ձերմակ երենայ նէ, միւս օրը օդը բաց կ'ըլլայ :

Լրեւուն ծագած ու մտած ատեն ամպ տեսնուի, կ'երենայ թէ քիչ ալ անձրե կուգայ :

Լրեւուն ծագած ու մտած ատեն ները՝ չորս դին ձերմակ ամպ գտնուի նէ, պարզութեան նշան է :

Լթէ բարձր լեռան գլուխը բարակ ձերմակ ամպ երենայ, պարզութեան նշան է : Լսանկ ալ ծովուն վրայ կ'երենայ նէ :

Բու թռչունը գիւերը ձայն կը հանէ, կամ ագռաւը սաստիկ կռկըռայ նէ, պարզութեան նշան է :

Անյբեկ նշաններ :

Լրեքօրեայ լուսնին ծայրը պղտոր տեսար, անձրեւի նշան է . չորրորդ օրն ալ ան պղտորութիւնը տեսար, ամպոտ օդի նշան է :

Լուսնին քովը բակ տեսար՝ կարմիր ջրի պէս պղտոր, ամպոտ օդի և շատ անձրեւի նշան է :

Լուսնին բակը սկագոյն ըլլայ նէ՝ քիչ անձրեւի նշան է :

Լթէ լուսնին բոլորը պղայծակի պէս ամպեր շատ տեսնուի նէ, շատ անձրեւի նշան է :

Լրել ծագած ատենը կարմիր ու

սեագոյն ամպերով ելլէ նէ , արեե-
լեան կողմը շատ անձրեի նշան է :

Արեուն ծագած ատենը չորս դին
փայլուն սե ամպ երենայ նէ , անձրեի
նշան է :

Այժմակ կամամպերու ձայթ մունք
որ կողմը ըլլայ նէ՝ անձրե գալու նշան
է . միայն փայլակը հիւսիսի կամ հա-
րաւի կողմերուն որ կողմը տեսնես նէ ,
հոն կ'ըլլայ անձրեը :

Եթէ հիւսիսի կողմէն շատ հով
փչէ , նշան է անձրեի :

Ձկնկուլ թռչունը շատ լուացուի
նէ , շատ անձրե գալու նշան է :

Կովերը երբոր հարաւի կողմը եր-
կայն երկայն կընային՝ անձրեի նշան է :

Որջիւնները երբոր իրենց հաւ-
կիթները տեղէ տեղկը կը կրեն , անձրեի
նշան է :

Հաւերը երբոր կը վազեն , կը կըռ-
կըռան , անձրեի նշան է :

Դորտերը գէպ 'ի ջուրը կը վազեն ,
կը պոռան կը կանչեն , անձրեի նշան է :

Երբոր կը տեսնես որ հովը կակուղ
կը փչէ , կ'ուշացընէ անձրեը . ու կաղ-
նի ծառը շատ պտուղ որ տայ , ան տա-
րին անձրե շատ կ'ըլլայ :

Իմէն կենդանւոյ գէպ 'ի հիւսիս
փախչիլը՝ անձրեի նշան է :

Կոռունկը ատենէն առաջ գայ նէ ,
աշունը երկայն կըքըշէ ու ձմեռը ան-
ձրե ձիւն շատ կ'ըլլայ . Եթէ կոռունկը
ուշ գայ նէ , ձմեռն ալ ուշ կը մնայ :

Իսանկ ուրիշ շատ կենդանեաց
շարժմունքէն , ու լեռան ծառերուն
քիչ կամ շատ պտուղ ունենալէն՝ յա-
ջորդ ձմեռը կը գուշակուի :

Պ. Պ

—————@————

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

ԱՍՏՎԱԲԱԸՆՈՒԹԻՒՆ

Հենքէի նոր հոլորէլ :

Հենքէ անդւնով գերմանացի քաջ
աստղաբաշխը երկու տարի առաջ մո-
լորակ մը գտներ էր , որ Իշտրէա ըսուե-
ցաւ . նոյն անձը աս տարի յուլիսի առ-
ջի օրերը Տրիզէն քաղքին մէջ ըլլա-
լով ուրիշ նոր մոլորակ մըն ալ գտեր
է , և ասոր մեծութիւնը իններորդ
ու տասներորդ կարգի աստղերուն
չափ է : Խտալիոյ աստղաբաշխներն
ալ մօտերս դիտելով ստուգեցին աս
մոլորակին գոյութիւնը , և կ'ըսեն
թէ ասիկայ ալ հաւանական կարծեօք
այն մանր մոլորակաց մէկն է որ հրատ
ու լուսնթագ մոլորակներուն մէջտե-
ղուանքը կը պտըտին :

ԲՈՒՏՎԱԲԱԸՆՈՒԹԻՒՆ

ՈՇԵՒԱԿ :

ԻՄԱՅՑԻՆ արեելեան մեծ արշիպե-
ղագոսին մէջի Ողովքեան կղզիները
անուանի են իրենց բոյսերուն շատու-
թեանն ու աղւորութեանը համար :
Արմաւենիի տեսակներ կան հոն որ
անոնց մէկ տեսակին պտուղը սակա-
կ'ըսուի , ու խիստ առողջարար ու
համեղ է : Ո՞անկուսթան անունով
ծառ մը կայ որ պտուղը խաղողի , ե-
լակի , կեռասի ու նարնջի համերը
ունի . հուշակաւոր է նաև հացի ծա-
ռը , երենսոսը , հնդիկընկոյզը² , թե-
քը՝ որուն փայտը նաւ շինելու կը
գործածուի , քայլեփուլթին՝ որ պա-
տուական եղ ունի : Իս օգտակար ծա-

1 Գարենքիւ .

2 Հինդուուս անդին :